ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ նոր և նորագույն գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ.հասցե՝ tatev1111@mail.ru

ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ամփոփում

Հրաչյա Հովհաննիսյանի պոեզիան, սկսած առաջին՝ «Իմ կյանքի երգը» ժողովածուից մինչև «Երկիր դրախտավայր» ժողովածուն, գտնվել է քննադատության ուշադրության կենտրոնում, արժևորվել հայ և այլազգի տասնյակ գրականագետների, բանաստեղծների կողմից:

Անդրադարձները հիմնականում եղել են բանաստեղծությունների առանձին շարքերի, ժողովածուների կապակցությամբ, թռուցիկ կերպով նշվել է նաև, որ Հր. Հովհաննիսյանի պոեզիան աչքի է ընկնում ժանրային բազմազանությամբ, պատկերավորման ու կերպարակերտման առանձնահատկություններով:

Առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել նրա պոեզիայի ժանրային համակարգը, ինչը շատ կարևոր է մի կողմից բանաստեղծի գրական դիմանկարի ամբողջացման, մյուս կողմից՝ պոեզիայի ավանդական ժանրերը նոր մոտեցումներով, կառուցվածքային նոր ձևերով հարստացնելու փորձի բացահայտման համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. Բանաստեղծություն, պոեմ, բալլադ, սոնետ, նոնետ, չափածո նովել, կառուցվածք:

Ներածություն

Ստեղծագործական ճանապարհի բոլոր հանգրվաններում Հր. Հովհաննիսյանը միշտ գտնվել է որոնումների ճանապարհին՝ իր պոեզիան հարստացնելով նաև ժանրային տարբեր դրսևորումներով, տարբեր թեմաների գեղարվեստականացման համար ընտրելով ժանրի համապատասխան ձևեր:

Հր. Հովհաննիսյանի պոեզիայի ժանրային ընդգրկումները, որպես կայացած համակարգ ներկայացնելը, անտարակույս, հիմք կարող է հանդիսանալ տեսական ընդհանրացումների համար, ինչը կնպաստի բանաստեղծի գրական դիմանկարի ամբողջացմանը:

Հր. Հովհաննիսյանը ստեղծագործել է տարբեր ժանրերով՝ բանաստեղծություն, պոեմ, բալլադ, սոնետ, նոնետ, չափածո նովել և այլն,

որոնք նրա բանաստեղծական աշխարհն ամբողջացրել են կոմպոզիցիոն տարբեր մոդելներով:

Տարբեր ժանրերով գրված ստեղծագործություններում Հր. Հովհաննիսյանն ընտրում է ժանրի կոմպոզիցիայի ամբողջացման նոր ձևեր՝ գործողությունների զարգացում միագիծ, շրջանակված, գծային, խառը տարբերակներով:

Ամսագրային հոդվածի սահմանափակ տարածքում, բնականաբար, հնարավոր չէ անդրադառնալ Հր. Հովհանիսյանի պոեզիայի բոլոր դրսևորումներին: Ուստի մեր առջև **նպատակ** ենք դրել անդրադառնալ նրա միայն սոնետներին ու նոնետներին, հատկապես, որ վերջինների մասին որևէ տեղեկություն չկա ոչ գրականագիտական ուսումնասիրություններում, ոչ բառարաններում:

Մեթոդաբանություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք գրական երկի քննաբանության ու արժևորման մի քանի մեթոդներ՝ քննական, վերլուծական, համադրական, կենսագրական: Մեծապես օգտվել են հայ և այլազգի գրականագետների տեսական ուսումնասիրություններից:

***

Հրաչյա Հովհաննիսյանի պոեզիայի աչքի ընկնող առանձնահատկություններից են ժանրային բազմազանությունը, անսպասելի հանգուցալուծումները, խորհրդանիշների համակարգը, բանաստեղծության կառույցում դետալների համաչափությունը, երաժշտականությունը ռիթմիկ դարձնող հանգավորումը: Բացի պոեզիայի ավանդական ժանրերից (բանաստեղծություն, պոեմ, լեգենդ, բալլադ, սոնետ, քառյակ, տաղ, ձոներգ և այլն), նրա շարքերում հանդիպում ենք նաև ժանրերի, որոնք բացարձակ նորություն են: Օրինակ՝ **նոնետը**: Նույնիսկ գրականագիտական ուսումնասիրություններում, դասագրքերում, տարբեր հեղինակներին նվիրված մենագրություններում մենք չենք հանդիպել նոնետի մասին թեկուզ թռուցիկ ակնարկի: Նոնետը երաժշտության քիչ տարածված ժանրերից է և գրականության մեջ լայն տարածում չի ստացել: Այն կատարվում էր ինը երաժիշտների կողմից, և կատարման ընթացքում երաժիշտները հերթականությամբ դուրս են գալիս բեմից: Ինը տողից է բաղկացած նաև նոնետի բանաստեղծական կառույցը: Առաջին տողն ունի ինը ոտք, երկրորդը՝ ութ, երրորդը՝ յոթ և այսպես՝ մինչև վերջին տողը:

Հրաչյա Հովհաննիսյանի «Ձիթենու ճյուղը» շարքում զետեղված են երկու նոնետներ («Նոնետ առաջին» և «Նոնետ երկրորդ»), որոնք, ճիշտ է, ինը տողից են բաղկացած, բայց մնացած բոլոր տողերում ոտքերի քանակը հավասար է: Քանի որ ժանրը երաժշտության տեսակներից մեկն է,

բնականաբար, պետք է ունենա երաժշտական ընդգծված հնչեղություն, համապատասխան ռիթմեր: Մոտավորապես այդպիսի հնչեղություն ունեն նաև Հրաչյա Հովհաննիսյանի նոնետները, որոնց մեջ, սակայն, երաժշտականությունն «ապահովվում» է արհեստականորեն: Բոլոր ինը տողերն էլ երկու նոնետներում ունեն միօրինակ հանգավորում, որոնք աղքատ, կարելի է ասել, արհեստական հանգեր են: Բերենք դրանցից մեկի օրինակը.

Թե լինեի անապատի ավազանում բոսոր,
Եվ քո սերը ինձ հետ լիներ, լիներ գիշեր ու զօր-
Կդարձնեի, աստվա՛ծ վկա, անապատը տոչոր
Մի երկրային կանաչ եդեմ, դրախտ արևավոր,
Կբերեի ճամփու վրա քարավաններ մոլոր,
Կկանչեի խարույկի մոտ բեդվիններին բոլոր,
Ու թե հանկարծ չունենայի հողն իմ ցորենավոր,
Ես քո սիրով կստեղծեի ինձ հայրենիք մի նոր,
Նորից քա՛ղցր հայերենով, նորից հայրենավո՛ր [1]:
(«Նոնետ առաջին»)

Նույն աղքատիկ հանգերն են նաև «Նոնետ երկրորդ»-ում՝ («Փակ-ցամաք-կրակ-աննպատակ-ճրագ-բակ-արագ-դատարկ»):
Ավելի պարզունակ է «Հույսի նոնետ»-ի հանգավորումը.

Հույսը սեզին է, կարծես, նման.
Բոց արեգակն է խանձում նրան,
Բոց գերանդին է հնձում նրան,
Բոց խորշակներն են խուժում վրան,
Իսկ նա, շտկելով մեջք ու իրան,
Նորից ելնում է և հուրհրան
Ցողուն է տալիս, ծիլեր վառման
Ինչպես հարաճուն սեզը գարնան:
Հույսը սեզին է միայն նման (I, 348):

Այս նոնետները գրվել են 1969 թվականին Փարիզում, ամենայն հավանականությամբ՝ թերթերում տպագրվածների նմանությամբ, և հենց դա է պատճառը, որ բանաստեղծը հետագայում չգրեց և ոչ մի նոնետ: Առանձնահատկությունների բացահայտման համար ուշադրության արժանի են Հրաչյա Հովհաննիսյանի սոնետները, որոնք զետեղված են «Ծովի լռությունը», «Սատիրիկոն», «Խաղաղ անձրև» շարքերում:

[1] Հովհաննիսյան Հր; Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Եր; «Խորհրդային գրող», 1989, էջ 345: Այսուհետ այս հատորից կատարված հղումները կնշվեն շարադրանքում:

Բոլոր դեպքերում բանաստեղծը գերադասում է սոնետի 4+4+3+3 կառուցվածքը: Սակայն եթե կառուցվածքի այս տարբերակում հիմնական ասելիքը կամ «պատկերավոր միտքը՝ սոնետի բանալին» բացահայտվում է վերջին երկու տողերում, ապա Հրաչյա Հովհաննիսյանի սենետներում վերջին տողերը ոչնչով չեն տարբերվում նախորդներից և հանդես չեն գալիս որպես «սոնետի բանալիներ»: Բերենք «Ակսել Բակունցին» նվիրված «Սոնետ հեծեծանքի» ստեղծագործության օրինակը: Սոնետն ավարտվում է «Երբ հիշում եմ կյանքում քո բախտը չար, // Քո տառապանքն անլուր, եղերական, // Սիրտս քառատվում է ամեն անգամ»:

«Սրտի քառատվելը» երևում է սոնետի բոլոր տողերում.

Ես ողբում եմ հավետ կորուստը քո,
Անժամանակ հանգած քո ձիրքերի:
Ինչպե՞ս ես դու նայել դահճի ձեռին,
Վերջին պահին ի՞նչ ես աղաղակել,
Որտե՞ղ ես դու պայծառ աչքդ փակել՝
Կարոտ հայրենական սև ցելերին:
Ախ, աստվա՜ծ իմ, ինչքան ծանր է մեռնել,
Անգո մի հանցանքի, մեղքի համար,
Ու դեռ ջահել՝ փշե պսակ առնել (I, 244):

Սոնետներում ընդհանրապես արծարծվում են սիրային և փիլիսոփայական թեմաներ: Նրանց մեջ անչափ քիչ է կամ լիովին բացակայում է անանձնականը: Հրաչյա Հովհաննիսյանի սոնետները կամ նվիրումներ են («Ա. Բակունցին», «Գուրգեն Մահարուն»), կամ գրված են պատերազմի թեմայով («Սոնետ ափսոսանքի»), կամ ունեն ընդգծված երգիծական բնույթ՝ սուր խայթոցներով: «Սոնետ նախատինքի» ստեղծագործության մեջ, օրինակ, բանաստեղծը երգիծանքի սուր նետերն ուղղում է դեպի հարմարվողականություն, ժամանակակից երևալու ճիգ ու ջղաձգություն.

Դու միշտ, ինչպես մարդը քարանձավի,
Ծվարում ես ժամին գոռ որոտման,
Անտարբեր ես մնում քարի նման
Հեռու-մոտիկ մարդկանց վիշտ ու ցավին:
Եվ ասում ես, դարի որդի՜ն ես դու,
Որ քեզ դարն է դարձրել խոհեմ այդպես,
Բախտի հրամանին այդքան հլու:
Եթե իմանայի, որ իսկապես
Դու՛ ես դարի որդին, հավատա՜ ինձ,
Կզզվեի՛, հաստատ, ես այդ դարից (I, 245):

Ավելի սուր են «Սատիրիկոն» շարքի «Սոնետ ատելության» և «Սոնետ տխուր սիրո» սոնետները, որոնց մեջ բանաստեղծը ատելության ու արգահատանքի իր խոսքն է ասում բոլոր նրանց հասցեին, ովքեր անանուն նամակներ էին գրում, պատերազմի օրերին «ամենայն ձևի ստով» մնացել էին թիկունքում և «վազում էին մթնով քողարկված կռվող զինվորի կանանց ետևից, փառք էին ճապկում և ամենից զիլ ասված ճառերով հայրենասերի սխրանքը կապկում»: Նաև խարազանում է իրենց բանաստեղծ հորջորջող այն գրչակներին, ովքեր «ծախում են արցունքները սիրո» և Հուդայի նման «երեսուն կաթիլ արցունքի դիմաց ուղիղ երեսուն տող սիրո երգ գրում»:

Հրաչյա Հովհաննիսյանի ստեղծագործություններում նկատելի է մի առանձնահատկություն. բոլոր դեպքերում, երբ նա փորձում է շեղվել բանաստեղծության կառույցի դասական ձևերից, ստեղծագործությունների և՛ կառույցներն են խաթարվում, և՝ բովանդակությունն է դառնում պարզունակ, նրա աշխարհայեցողությունից ու ձեռագրից շատ հեռու: Օրինակ «Ձիթենու ճյուղը» շարքի «Տաղեր»-ում բանաստեղծը, կոպիտ ասած, նման չէ ինքն իրեն: Շարքում զետեղված տաղերը («Մնջիկ աղջիկ իմ յարը», «Լուսնթագ, լո՛ւյս պահիր յարիս», «Ողջ տարին ցավերով լեցուն», «Ծաղիկ իմ, ծաղի՛կ իմ գարնան», «Գինով լի գավաթ իմ, գա՛վ իմ», «Չթողին, չթողին բացվեմ»), որոնք գրված են սիրային թեմայով, լավագույն դեպքում գրապատմական նշանակություն կարող են ունենալ: «Ձիթենու ճյուղը» շարքն ընդհանուր առմամբ բաղկացած է գեղեցիկ, բովանդակության առումով բանաստեղծի նախասիրություններին համահունչ գործերով, և մի տեսակ տարօրինակ է, որ շարքում զետեղվել են նաև վեց տողերից բաղկացած մի քանի տաղեր:

Ընդգծենք նաև, որ այս տիպի բանաստեղծությունները ոչ մի կերպ ստվեր չեն գցում Հրաչյա Հովհաննիսյանի բանաստեղծական հարուստ աշխարհի վրա:

Եզրակացություններ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում մեր եզրահանգումները հետևյալն են՝

1. Հրաչյա Հովհաննիսյանը, շարունակելով և համադրելով հայ միջնադարյան ու նոր և համաշխարհային գրականությունների ավանդույթները՝ լայնացրեց ժանրային ընդգրկումների սահմանները, հարստացրեց նոր մոտեցումներով, կառուցվածքային նոր ձևերով: Տարբեր ժանրերով գրված նրա ստեղծագործություններում աչքի են ընկնում անսպասելի հանգուցալուծումները, կառույցի ներսում դետալների համաչափությունը, ռիթմական միավորների զուգորդումները:

2. Բացի պոեզիայի ավանդական ձևերից, նրա ժողովածուներում կան նաև ժանրեր, որոնք բացարձակ նորություն են: Օրինակ՝ նոնետը, որը երաժշտության քիչ տարածված ժանրերից է և լայն տարածում չի գտել նաև գրականության մեջ: Ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ այն կատարվում էր ինը երաժիշտների կողմից, և կատարման ընթացքում երաժիշտները հերթականությամբ դուրս են գալիս բեմից: Ինը տողից է բաղկացած նաև նոնետի բանաստեղծական կառույցը: Առաջին տողն ունի ինը ոտք, երկրորդը՝ ութ, երրորդը՝ յոթ և այսպես՝ մինչև վերջին տողը: Քանի որ ժանրը երաժշտության տեսակներից մեկն է, բնականաբար պետք է եզրակացնել, որ պետք է ունենա երաժշտական համապատասխան հնչեղություն, համապատասխան ռիթմեր:

3. Մոտավորապես այդպիսի կառուցվածք ու հնչեղություն ունեն նաև Հր. Հովհաննիսյանի նոնետները, որոնց երաժշտականությունը նկատելի կերպով «ապահովվում» է արհեստականորեն: Բոլոր ինը տողերում էլ Հր. Հովհաննիսյանի նոնետներն ունեն միօրինակ հանգավորում, որոնք աղքատ, կարելի է ասել արհեստական հանգեր են: Մեր եզրահանգումը Հր. Հովհաննիսյանի նոնետների կապակցությամբ այն է, որ դրանք գրվել են փարիզյան թերթերում տպագրված նոնետների նմանությամբ, որպես փորձեր, և դա է պատճառը, որ բանաստեղծը հետագայում այլևս չանդրադարձավ այդ ժանրին:

Հրաչյա Հովհաննիսյանի ստեղծագործություններում զգալի տեղ են գրավում սոնետները:

4. Կառուցվածքի տարբեր ձևեր է օգտագործում Հր. Հովհաննիսյանը նաև սոնետներում: Սոնետներն, ընդհանրապես ունեն կառույցի ամրագրված ձևեր: Հր. Հովհաննիսյանը գերադասում է սոնետի 4+3+3+3 կառուցվածքը: Սակայն, եթե կառույցի այս տարբերակում հիմնական ասելիքը կամ «սոնետի բանալին» բացահայտվում է վերջին երկու տողերում, ապա Հր. Հովհաննիսյանի սոնետներում վերջին տողերը ոչնչով չեն տարբերվում նախորդներից և հանդես չեն գալիս որպես «սոնետի բանալիներ»:

5. Մեր ընդհանուր եզրահանգումը հետևյալն է. ստեղծագործական ճանապարհի բոլոր հանգրվաններում գտնվելով որոնումների ճանապարհին՝ Հր. Հովհաննիսյանը, ճիշտ է փորձարկեց բանաստեղծության կառույցի տարբեր ձևեր, սակայն երբեք չտարվեց նորաձև երևալու մղումներով: Միշտ հավատարիմ մնաց մեր պոեզիայի դասական ավանդույթներին և նրանց ամուր պատվանդանի վրա ստեղծեց բանաստեղծական իր յուրահատուկ կառույցը:

Татевик Погосян

Жанровая система поэзии Грачьи Оганисяна

Заключение

Ключевые слова и выражения: стихотворение, поэма, баллада, сонет, нонет, стихотворная новелла, структра.

Наши выводы по результатам исследования темы:

1. Грачья Оганисян продолжая и сопоставляя традиции армянской средневековой литературы с новой и мировой литературой, расширил границы жанрового диапазона, обогатил новыми подходами, новыми структурными видами. В его произведениях, написанными в разных жанрах, выделяются неожиданные развязки, симметрия деталей внутри структуры, сочетание ритмических единиц.

2. Кроме традиционных видов поэзии, в его сборниках есть еще и жанры, которые являются абсолютной новизной. К примеру, нонет, который является мало распространенным жанром музыки и не получил широкое распространение и в литературе. В результате исследований выяснили, что его исполняли девять музыкантов, и во время исполнения музыканты по очереди спускались со сцены. Из девяти строк состоит и поэтическая структура нонета. Первая строка имеет девять ног, вторая-восемь, третья-семь и так до последней строки. Поскольку жанр является одним из видов музыки, следовательно, нужно сделать вывод, что он должен иметь соответствующее музыкальное звучание, соответствующие ритмы.

3. Приблизительно такую же структуру и звучание имеют и нонеты Грачьи Оганисяна, музыкальность которых заметно «обеспечивается» искусственным образом. Нонеты Грачьи Оганисяна во всех девяти строках имеют однообразную рифму, довольно скудные, можно сказать, что искусственные рифмы. Наше заключение о нонетах Грачьи Оганисяна состоит в том, что они были написаны на подобие нонет печатанных в парижских газетах, как эксперимент, и это является причиной того, что поэт в будущем больше не вернулся к этому жанру.

В произведениях Грачьи Оганисяна значительное место занимают сонеты.

4. Грачья Оганисян использует разные виды структуры и в сонетах. Сонеты в целом имеют утвержденные виды структуры. Грачья Оганисян дает предпочтение 4+3+3+3 структуре сонета. Однако, если в этом виде структуры основная мысль или «ключ сонета» раскрывается в двух последних строках, то в сонетах Грачьи Оганисяна последние строки ни чем не отличаются от предыдущих и не выступают как «ключи сонета».

5. Наши общие выводы: находясь в поисках дороги во всех пристанищах творческого пути, Грачья Оганисян, собственно говоря, экспериментировал разные виды поэтической структуры, однако, никогда не увлекся стремлением быть модным. Всегда был верен классическим традициям нашей поэзии и на их сильной основе создал свою поэтическую своеобразную структуру.

Tatevik Poghosyan

The genre frame of Hrachya Hovhannisyan's poetry

Conclusion

Key words and expressions: a poem , a ballad, a sonnet, a nonet, a verse novel, a structure.

As a result of the study of the theme , our conclusions are as follows:

1. Continuing and combining the traditions of medieval Armenian, modern Armenian and world literatures Hrachya Hovhannisyan widened the boundaries of genre inclusion, enriched it with new approaches in new structural ways. The equability of details in the structure, the associations of the rhythmic units stand out with unexpected resolutions in his works written in different genres.

2. Apart from the traditional forms of poetry there are also some genres in his collections that are absolutely new. E.g. the nonet, which is one of the less spread genres in music and has not been widely spread in the literature, either. As a result of the study we have found out that it was performed by nine musicians and during the performance the musicians leave the stage one by one. The poetic structure of nonet also consists of nine lines, the first line has nine legs, the second one has eight legs, and the third line has seven lines and so on till the last line. As the genre is one of the types of music, one must naturally conclude, that it must have an appropriate musical sonority and appropriate rhythms.

3. Hrachya Hovhannisyan's nonets approximately have such structures and sonorities, the musicality of which are obviously provided in an artificial way. All nine nonets written by Hrachya Hovhannisyan have the same rhyming, that are quite poor. It can be said that they are artificial rhymes. Our conclusion on Hr. Hovhannisyan's nonets is that they were written in the manner of nonets printed in Parisian newspapers, as experiments, and that is the reason why the poet did not refer to that genre later. Sonnets occupy a significant place in Hrachya Hovhannisyan's works.

4. Hr. Hovhannisyan uses different forms of structure not only in nonets but also in his sonnets. Sonnets generally have fixed forms of structure. Hr. Hovhannisyan prefers the 4+3+3+3 structure of the sonnet. However, while in this version of the structure the main point or "key of the sonnet" is revealed in the last

two lines, in Hr. Hovhannisyan's sonnets, the last lines do not differ from the previous ones and do not act as "sonnet keys".

5. Our general conclusion is as follows: at all the stages of his creative journey being on the way of research Hr. Hovhannisyan truly tried different structures of poems, but he never got caught up in the urge to look fashionable: He always remained faithful to the classical traditions of our poetry and created his unique poetic structure on their solid pedestal.

Օգտագործված գրականություն

1. Հովհաննիսյան Հր; Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Եր; «Խորհրդային գրող»,1989, 608 էջ:
2. Հովհաննիսյան Հր; Ընտիր երկեր 2 հատորով, հ. 2, Եր; «Խորհրդային գրող»,1990, 436 էջ:
3. Մահարի Գ., Պոեզիան և քննադատությունը, «Գրական թերթ», 1964, N 37:
4. Մեժելայտիս Էդ., Իմ կրկնակի Արարատը, Եր., «Գասպրինտ» հրատ., 2013, 276 էջ:

Խմբագրություն է ուղարկվել 03.10.2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 19.10.2022թ.
Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.